ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/86

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով քաղաքացի «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 03.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Տեխնիկական միջոցների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցում:

Վերոնշված գնանշման հարցման մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 27.04.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 2.4 կետի համաձայն՝ 07.05.2018թ. գնահատող

հանձնաժողովը շարունակելով աշխատանքները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 2-րդ չափաբաժով՝ լուսանկարչական թիթեղներ կամ ժապավեններ (նախահաշվային գինը կազմում է 10,248,000 ՀՀ դրամ), 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ընդհանուր 9,270,000 ՀՀ դրամ գումարով՝ ներառյալ ԱԱՀ (առանց ԱԱՀ՝ 7,725,000 ՀՀ դրամ):

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ս.թ. մայիսի 18-ին Ընկերությունը, սահմանված կարգով և ժամկետում t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել է որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (նախկինում կատարած մեկ պայմանագիր՝ ընդհանուր 40,923,000 ՀՀ դրամ) և իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Որպես համանման պայմանագիր՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է Ընկերության և ՀՀ ՊՆ-ի միջև 13.04.2015թ. կնքված ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքի գնման «ՇՀԱՊՁԲ-1/3/3» ծածկագրով պայմանագիրը, որով Ընկերությունը ՀՀ ՊՆ-ին մատակարարել է մի շարք տեխնիկական միջոցներ, այդ թվում նաև IP տեսախցիկներ, որոնք որպես լուսանկարչական պարագաներ, կատարում են լուսանկարահանում, տեսաձայնագրում, ձայնագրում և այլն:

Սակայն, ս.թ. հունիսի 6-ին Ընկերությունը գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցվել է, որ 22.05.2018թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝

- ««ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից հավելված 6.1-ով ներկայացված 2-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում տարակերպ մեկնաբանությունը բացառելու համար անհրաժեշտ է հանել «կամ համարժեք» բառերը:

- «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագիրը չի համարվել նմանատիպ: Մասնավորապես, նախկինում կատարված պայմանագրով նախատեսված ապրանքները չեն դասվում ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի մասով որպես նմանատիպ

սահմանված (լուսանկարչական թիթեղների և լուսանկարչական պարագաների) ապրանքների շարքին:

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը, մասնակցին առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո, սահմանված կարգով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

Ի պատասխան Ընկերությունը՝ սահմանված կարգով և ժամկետում t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել է պարզաբանում ըստ էության և շտկել է առաջարկվող տեխնիկական բնութագիրը:

Շարունակելով ընթացակարգը՝ Հանձնաժողովը ս.թ. հունիսի 20-ին ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի միայն 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները կարող են դիտվել նմանատիպ /տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-3550V և տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-HM620/, որոնց ընդհանուր գումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և հաշվի առնելով նշված հանգամանքը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին շտկելու առկա անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Ապա, հունիսի 26-ին ժամը 10:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, քննարկելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված շտկմանն ի պատասխան 21.06.2018թ. ներկայացրած գրությունը, արձանագրել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել առկա անհամապատասխանությունը և չի ներկայացրել «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորող անհարաժեշտ փաստաթղթերը, որի արդյունքում մերժել է հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

Նույն հոդվածի՝

-4-րդ մասով սահմանվում է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

- 5-րդ մասով սահմանվում է, որ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք, մասնավորապես, Ընկերության նկատմամբ: Ավելին, գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում չի ապահովել իր

հայեցողական իրավունքի միատեսակ կիրառությունը, դրանով իսկ հաստատելով իր կողմից խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Կարգի 65-րդ կետի՝ համաձայն՝ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նախ պետք է նշել, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության և Ընթացակարգի հրավերի համաձայն՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Այսպես՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորում ներկայացվել է «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով 13.04.2015թ. կնքված տեխնիկական միջոցների մատակարարման մեկ պայմանագիր, որի գինը՝ գումարային արտահայտությամբ, կազմում է 40,923,000 ՀՀ դրամ, մինչդեռ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի գնային առաջարկը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կազմում է ընդամենը 9,270,000 ՀՀ դրամ: «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով պայմանագրում նշված IP տեսախցիկները, որպես լուսանկարչական պարագաներ, կատարում են լուսանկարահանում, տեսագրում, ձայնագրում և տեսաձայնագրում :

Կարելի է փաստել, որ թե «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով և թե գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նշված է, որ պետք է ներկայացվի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր (կամ պայմանագրեր), ինչը և ներկայացվել է, և ոչ թե ապրանքներ:

Ինչ վերաբերում է պայմանագրին և դրա շրջանակներում կատարված ապրանքների մատակարարումներին, ապա պայմանագրով նախատեսված ապրանքները չեն կարող տրոհվել, մասնատվել կամ դիտարկվել առանձին, քանի որ այն ընդհանուր մեկ պայմանագիր է իր բոլոր բաղադրիչներով, մասնավորապես պայմանագիրը կատարված է համարվում, եթե պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարվել են ամբողջ ծավալով, ժամանակին, պատշաճ կերպով:

Ինչպես գնումների օրենսդրությամբ, այնպես էլ մրցույթի հրավերով նախատեսված կամ սահմանված չէ, որ պայմանագիրը կարելի է մասնատել, իսկ գնման առարկան որպես նմանատիպ՝ առանձնացնել, և դրա կատարումը, կամ ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը դիտարկել առանձին: Պայմանագրի կատարումը, կամ ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը, դրանից բխող հետևանքները այն իրավահարաբերություններն են, որոնք հստակ կարգավորվում են թե պայմանագրով, և թե՝ ՀՀ օրենսդրությամբ: Պայմանագրի որևէ կետով թույլ տրված խախտում կամ չկատարում, կամ ոչ պատշաճ կատարում, կարող է հանգեցնել պայմանագրի լուծարմանը:

Այսպիսով, վերոգրյալի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ.

1. Պատվիրատուին անհրաժեշտ է ձեռք բերել լուսանկարչական թիթեղներ կամ ժապավեններ: Ընկերության կողմից առաջարկվել է տվյալ ապրանքի տեխնիկական բնութագիր, որն էլ գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել է:

2. Ինչ վերաբերում է մասնագիտական փորձառությանը, որի հիմնավորման նպատակով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր, ապա նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ներկայացրել է և ներկայացրածը համապատասխանում է, ինչպես մրցույթի հրավերի պահանջներին, այնպես էլ գնումների մասին ՀՀ օրենսդրությանը: Սակայն գնահատող հանձնաժողովը տարակերպ և իր հայեցողությամբ մեկնաբանելով վերոհիշյալ իրավանորմերը, գտնում է, որ նմանատիպ պայմանագիրը պետք է դիտարկել պայմանագրից կամ յուրաքանչյուր պայմանագրից առանձին վերցված և մատակարարած նմանատիպ ապրանք, և դրանք ամբողջացնելով գումարային առումով կգնահատի բավարար, եթե ընդհանուր հանրագումարը գումարային արտահայտությամբ, պակաս չի լինի սույն ընթացակարգի շրջանակում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բացի այդ, տվյալ գնման առարկա հանդիսացող ապրանքի ձեռք բերումը, ներկրումը կամ մատակարարումը չի պահանջում որևէ հատուկ թույլտվություն կամ արտոնագիր, գտնվում է ազատ վաճառքում, և ըստ էության իրենից ներկայացնում է էլեկտրոնային սարքավորումների համար նախատեսված ծախսվող նյութ, պարագա, տեխնիկական միջոց: Իսկ ներկայացված պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքներն իրենց բնույթով և նշանակությամբ հենց այդպիսի ապրանքներ են, այլ ոչ թե շինանյութ, սնունդ, տնտեսական կամ այլ նշանակության ապրանքներ:

Տարակուսանք է առաջացնում նաև այն հանգամանքը, որ գնահատող հանձնաձողովն անուղղակի կերպով, անտեսելով Ընկերության ներկայացրած ամենացածր գնային առաջարկը, բազմամյա մատակարարումների և ՀՀ ՊՆ-ի հետ համագործակցության փորձառությունը, մերժում է Ընկերության հայտը: Բանն այն է, որ նույն չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած ընկերության գնային առաջարկը կազմում է ընդհանուր 9,960,000 ՀՀ դրամ, այսինքն 690,000 դրամով ավելի, քան «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի գնային առաջարկն է: Իսկ եթե համամատելու լինենք վերջիններիս գնային առաջարկներն առանց ԱԱՀ, քանի որ տվյալ ընկերությունն ի տարբերություն «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի, ԱԱՀ վճարող չէ, ապա տարբերությունը կազմում է 2,235,000 ՀՀ դրամ:

Պետք է նշել նաև, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանգեցրել է նաև վերջինիս գնման գործընթացին մասնակցության իրավունքի խախտմանը, ինչը երաշխավորված է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, և հանգեցրել է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի խախտմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, ընկերության նկատմամբ դրսևորել է խտրական վերաբերմունք: Գնահատող հանձնաժողովը ոչ ստանդարտ մոտեցում է ցուցաբերել՝ խախտելով նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները:

Մասնավորապես, մի դեպքում գնահատող հանձնաժողովը ներկայացված պայմանագիրը ընդհանրապես չի դիտարկում որպես նմանատիպ և պահանջում է ներկայացնել այլ պայմանագիր: Ապա, Ընկերության պատասխան գրությունը ստանալուց հետո, ներկայացված պայմանագիրը գնահատում է նմանատիպ, սակայն այս անգամ որոշում է պայմանագիրը և դրա շրջանակներում մատակարարված ապրանքները մասնատել, տրոհել և երկրորդ անգամ է շտկում պահանջում:

Վերոգրյալ պայմաններում, անվիճելի է դառնում այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի գործողությունները և կայացրած որոշումները հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք դրույթների, այդ թվում՝ Կարգի 47-րդ կետին:

Հիշյալ փաստարկների հիմքով անհրաժեշտ ենք համարում արձանագրել նաև, որ գնահատող հաձնաժողովը իրավունք չուներ մեկից ավելի անգամ նույն չափաբաժնով շտկում պահանջեր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից, որն էլ առաջացրել է Կարգի 48-րդ կետի խախտում: Սակայն, գնահատող հանձնաժողովն իր գործողություններով դրսևորվելով հայեցողական դիրքորոշում, անտեսության է մատնել այն հանգամանքը, որ ընկերությունը պատշաճ կերպով ներկայացրել է մասնագիտական փորձառությունը հիմանավորող փաստաթղթերը՝ պայմանագիրը, որը համապատասխանում է գնումների օրենսդրությանն ու մրցույթի հրավերին:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):»

Տվյալ պարագայում, ինչպես գնումների օրենսդրությամբ, այնպես էլ մրցույթի հրավերով նախատեսված կամ սահմանված չէ, որ որպես մասնագիտական փորձառություն ներկայացրած պայմանագիրը կարելի է մասնատել, իսկ գնման առարկան որպես նմանատիպ առանձնացնել և դրա կատարումը, կամ ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը դիտարկել առանձին: Պայմանագրի կատարումը, կամ ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը՝ դրանից բխող հետևանքները այն իրավահարաբերություններն են, որոնք հստակ կարգավորվում են թե պայմանագրով և թե ՀՀ օրենսդրությամբ: Պայմանագրի որևէ կետով թույլ տրված խախտում կամ չկատարում, կամ ոչ պատշաճ կատարում, կարող է հանգեցնել պայմանագրի լուծարմանը և այն գնահատել որպես չկատարված պայմանագիր:

Դեռ ավելին, Կարգի 65-րդ կետի համաձայն՝ տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովը, անգործության մատնվելով, շրջանցել է նաև այս դրույթը, երկակի որոշումներ կայացնելով ոտնահարել է ընկերության օրինական շահերը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է

կամայական ձևաչափով, իսկ որոշումները կայացվել է նույն օրենսդրության խախտումներով: Փաստորեն ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ցանկացած ժամանակ կարող է շրջանցել, խախտել, կամ իր հայեցողությամբ մեկնաբանել օրենքը, ինչի արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հռչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա, ինչը հարիր չէ սահմանադրորեն իրավական բնորոշվող պետությանը: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր գնահատումն իրականացնել հաշվի առնելով ներկայացրած պայմանագիրը, այլ ոչ թե առանձին ապրանքների մատակարարումը: Առկա խնդիրը կայանում է նաև նրանում, որ հանձնաժողովը մի քանի անգամ է գնահատել նույն պայմանագիրը, և նույն պայմանագրի մասով ընդունել մի քանի տարբեր որոշումներ, որոնք հակասում են ինչպես գնումների օրենսդրությանը, այնպես էլ մրցույթի հրավերի պահանջներին:

Վերլուծելով վերոգրյալը մեկ համատեքստում, ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հիմնարար և ելակետային սկզբունքների, ի թիվս այլնի, խտրականության արգելքի, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջների կոպիտ խախտումներով: Փաստորեն, գնահատող հանձաժողովը սուբյեկտիվ կամ անհասկանալի պատճառներից ելնելով՝ չի ցանկանում բավարար գնահատել ընկերության կողմից ներկայացրած պայմանագիրը, սակայն վերջինս իրավասություն չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությունը իր հայեցողությամբ դիտարկելու, պայմանագրի բովանդակությունը մեկնաբանելու, մասնավորապես ապրանքների մատակարարումը, որպես նմանատիպ մասնատելու կամ տարանջատելու, քանի որ դա մեկ ամբողջական պայմանագիր է և գնահատումը պարտավոր էր կատարել ամբողջությամբ:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 12.07.2018թ. ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Միևնույն ժամանակ նույն կետով սահմանվում է, որ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընկերությունը ներկայացված բողոքով վիճարկել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Տեխնիկական միջոցների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների իրավաչափության հարցը:

Փաստորեն, տվյալ դեպքում գնանշման հարցման գնման առարկա են հանդիսանում տեխնիկական միջոցները:

Տվյալ գնանշման հարցման բոլոր չափաբաժինների համար որպես համանման հայտարարված պայմանագրերի առարկաները հանդիսանում են «տեխնիկական միջոցներ» և դասվում նույն՝ «տեխնիկական միջոցներ» տնտեսական խմբին:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորում ներկայացվել է «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով 13.04.2015թ. կնքված մեկ պայմանագիր, որի գինը գումարային արտահայտությամբ, կազմում է 40,923,000 ՀՀ դրամ: Նշված պայմանագիրը կնքվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման գործընթացի արդյունքում, որը հայտարարվել է «Էլեկտրոտեխնիկայի և Ռադիոտեխնիկայի» ձեռք բերման համար, և ներկայացված պայմանգրով փաստորեն մատակարավել են տարբեր տեսակի տեխնիկական միջոցներ:

Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով պայմանագիրը, հանգել է հետևյալ եզրակացության. «Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի միայն 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները դիտել նմանատիպ /տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-3550V և տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-HM620/, որոնց ընդհանուր գումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և հաշվի առնելով նշված հանգամանքը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին շտկելու առկա անհամապատասխանությունները, իսկ նիստը

շարունակել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Վերոհիշյալից բխում է, որ գնահատող հանձնաժողովը, նախ, տրոհել է ներկայացված պայմանագիրը՝ վերջինիս առարկայից առանձնացնելով որոշ ապրանքատեսակներ և գնահատելով միայն դրանք, ինչի իրավաչափության հարցը արդեն իսկ վիճարկվել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2018թ. ներկայացված բողոքով:

Բացի այդ, հաշվի առնելով, որ «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով պայմանագրով մատակարարվել են բացառապես տեխնիկական միջոցներ, ապա գնահատող հանձնաժողովը պարտավոր էր ղեկավարվել Կարգի 65-րդ կետի պահանջներով և «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով պայմանագիրը ամբողջությամբ դիտարկել համանման (նմանատիպ), քանզի դրանով մատակարարված բոլոր ապրանքները դասվում են հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին:

Ավելին, եթե այստեղ անգամ առկա լիներ տնտեսական գործունեության տեսակների տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորություն, ապա Կարգի նույն կետի ուժով՝ գնահատող հանձնաժովը պարտավոր էր առկա տարբերությունը մեկնաբանել հօգուտ մասնակցի, ինչը սակայն չի կատարվել»:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 22.05.2018թ. նիստի արձանագրության 1.1 կայացրած որոշումը՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի 2-րդ չափաբաժնի մասով որպես մասնագիտական փորձարության չափանիշը հիմնավորող ներկայացրած Ընկերության և ՀՀ ՊՆ-ի միջև 13.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/3/3» ծածկագրով գնման պայմանագիրը նմանատիպ չգնահատելու և առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 20.06.2018թ. նիստի արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումը՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի 2-րդ չափաբաժնի մասով որպես մասնագիտական փորձարության չափանիշը հիմնավորող ներկայացրած Ընկերության և ՀՀ ՊՆ-ի միջև 13.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/3/3» ծածկագրով գնման պայմանագիրը անհամապատասխան գնահատելու և առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 26.06.2018թ. նիստի արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումը՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը սույն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 10.07.2018թ. թիվ ԴՎԱ/2489 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար հատուկ սարքավորումների գնման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնով (Լուսանկարչական թիթեղներ կամ ժապավեններ) 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն: Արդյունքում սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը: «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, սակայն վերջինս որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող այլ պայմանագիր չի ներկայացրել, այլ ներկայացրել է պարզաբանում՝ գրության տեսքով: 20.06.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը և պատասխանատու ստորաբաժանման հանձնաժողովին ուղղված դիրքորոշումը՝ պայմանագրում ներառված ապրանքատեսակների նմանատիպության վերաբերյալ որոշել է, որ ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայամանգրի 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքները կարող են դիտվել որպես նմանատիպ, որոնց ընդհանուր գումարը սակայն պակաս է ներկայացված գնային առաջարկի 50%-ից, և հաշվի առնելով նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով

կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը: 26.06.2018թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, քննարկելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված շտկմանն ի պատասխան ներկայացված գրությունը, արձանագրել է, որ ընկերության կողմից չի շտկվել առկա անհամապատասխանությունը և չի ներկայացվել հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերը:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2–րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը և տվյալ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «Սիգռամ» ՍՊԸ-ին, որին առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի կասեցումը բացասական է ազդում մատակարարման բնականոն ընթացքին, կարծում եմ, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է, ոչ իրավաչափ և ենթակա է մերժման»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արտյոմ Համբարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 03.07.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, 12.07.2018թ. ներկայացրած բողոքի լրացումը, Պատվիրատուի 10.07.2018թ. թիվ ԴՎԱ/2489 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.04.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 և 22.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հատուկ սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» գնանշման

հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

Հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի գնման առարկա են հանդիսանում տեխնիկական միջոցները, որոնք խմբավորված են 4 չափաբաժիններում: Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսացել «լուսանկարչական թիթեղները կամ ժապավենները» ապրանքը, որի տեխնիկական բնութագրերով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«25 Կ (K) կամ 25Լ(Л) տիպի չծակոտված (неперфорированная) ավիացիոն ֆոտոժապավեն. նախատեսված է օդային լուսանկարահանման և լուսային ճառագայթի միջոցով ինֆորմացիայի գրանցման համար: 25 Կ կամ (25Լ) ֆոտոժապավեն՝ լուսազգայնությունը S 0.85 550 միավոր, ցայտունակության գործակիցը՝ 1.5-2.4, մաքսիմալ օպտիկական խտությունը՝ 2.5 ոչ պակաս, երևակումը՝ ՈՒՊ-5 կամ համարժեք երևակիչով, ֆիկսացիան ԲԿՖ-2 կամ համարժեք ֆիկսաժով, ապրանքը արտադրական փաթեթավորումով՝ մեկ գլանափաթեթում 3.5սմ X 30000սմ. ֆոտոժապավեն, պահպանումը 5-250C ջերմաստիճանային և մինչև 85% օդի հարաբերական խոնավության պայմաններում: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, արտադրված 2018թ. ոչ շուտ: Պահպանման երաշխիքային ժամկետը՝ ոչ պակաս, քան 24 ամիս, սկսած արտադրության ամսից»:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

բ. նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած

մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համարվում 2-րդ չափաբաժնի համար՝ լուսանկարչական թիթեղների կամ ժապավենների, լուսանկարչական պարագաների մատակարարման պայմանագրերը:

Հանձնաժողովի 27.04.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով արձանագրվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/23» ծածկագրով ընթացակարգին «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 9,270,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության (շարունակություն 15.05.2018թ.) 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին, իսկ 4.3 կետով՝ որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության հետ 13.04.2015թ. կնքված ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «ՇՀԱՊՁԲ-1/3-3» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիրը, որով Ընկերությունը ՀՀ ՊՆ-ին մատակարարել է մի շարք տեխնիկական միջոցներ, այդ թվում անվտանգության տեսախցիկներ (տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-3550V և տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-HM620), որի ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 40,923,000 ՀՀ դրամ: Ներկայացվել են նաև համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունների և հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Հանձնաժողովի 22.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապառտասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացված նախկինում կատարված պայմանագրով նախատեսված ապրանքները չեն դասվում

ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի մասով որպես նմանատիպ սահմանված (լուսանկարչական թիթեղների և լուսանկարչական պարագաների) ապրանքների շարքին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը, ծանուցել մասնակցին՝ առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո, սահմանված կարգով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 06.06.2018թ. էլեկտրոնային ծանուցմամբ Ընկերությանը տեղեկացրել է վերը նշված որոշման վերաբերյալ:

Ի պատասխան Հանձնաժողովի ծանուցմանը Ընկերությունը 07.06.2018թ. t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել է պարզաբանում, որով հայտնել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորում ներկայացվել է «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով 13.04.2015թ. կնքված մեկ պայմանագիր, որի գինը կազմում է 40,923,000 ՀՀ դրամ, մինչդեռ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է ընդամենը 9,270,000 ՀՀ դրամ: Ընկերությունը հավելել է նաև, որ իր կողմից ՀՀ ՊՆ-ին մատակարարվել են մի շարք տեխնիկական միջոցներ, այդ թվում նաև IP տեսախցիկներ, որոնք որպես լուսանկարչական պարագաներ, կատարում են լուսանկարահանում, տեսաձայնագրում, ձայնագրում և այլն: Ընկերությունը վկայակոչել է համապատասխան իրավանորմերը և եզրակացրել, որ Կարգի 65-րդ կետի համաձայն՝ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը պետք է մեկնաբանվի հօգուտ մասնակցի:

Ուսումնասիրելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 07.06.2018թ. ներկայացված պարզաբանումը և պատասխանատու ստորաբաժանման Հանձնաժողովին ուղղված դիրքորոշումը՝ Հանձնաժողովը 20.06.2018թ. կայացած նիստում՝ «ՇՀԱՊՁԲ 1/3-3» ծածկագրով պայմանագրում ներառված ապրանքատեսակների նմանատիպության վերաբերյալ որոշել է, որ Ընկերության կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրի 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքները կարող են դիտվել որպես նմանատիպ, սակայն դրանց ընդհանուր գումարը պակաս է ներկայացված գնային առաջարկի 50%-ից, և հաշվի առնելով նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել

որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին շտկելու առկա անհամապատասխանությունը:

Ի պատասխան Հանձնաժողովի 20.06.2018թ. կայացած նիստում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի վերաբերյալ Հանձնաժողովի հայտնած դիրքորոշմանը՝ Ընկերությունը 21.06.2018թ. Հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ թե «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով և թե գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նշված է, որ պետք է ներկայացվի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր (կամ պայմանագրեր), այլ ոչ թե ապրանքներ, ինչը և ներկայացվել է: Ինչ վերաբերվում է պայմանագրին և դրա շրջանակներում կատարված ապրանքների մատակարարումներին, ապա պայմանագիրը, ապրանքները չեն կարող տրոհվել, մասնատվել կամ դիտարկվել առանձին, քանի որ այն ընդհանուր մեկ պայմանագիր է իր բոլոր բաղադրիչներով, մասնավորապես պայմանագիրը կատարված է համարվում, եթե պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարվել են ամբողջ ծավալով, ժամանակին և պատշաճ կերպով:

Գնահատող հանձնաժողովը 26.06.2018թ. կայացած նիստում՝ քննարկելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված շտկմանն ի պատասխան ներկայացված գրությունը, արձանագրել է, որ ընկերության կողմից չի շտկվել առկա անհամապատասխանությունը և չի ներկայացվել հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերն, ինչի հիման վրա Հանձնաժողովը որոշել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Ընկերության կողմից որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացված պայմանագրի առանձին չափաբաժիններով նախատեսված են այնպիսիս ապրանքատեսակներ, որոնք նմանատիպ են հանդիսանում նույն Ընթացակարգի իմաստով, մասնավորապես՝ 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքները կարող են դիտվել որպես նմանատիպ, սակայն դրանց ընդհանուր գումարը պակաս է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից, և հաշվի առնելով նշված հանգամանքը, Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է Հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժվել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա

պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. N 220-Ն հրամանով հաստատվել է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը: Հիշյալ ցանկի «Ապրանքներ» բաժնի 1.12 կետով նախատեսվել է «Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ» ապրանքային խումբը, որում ներառված են նաև տարբեր տեսակի թվային տեսախցիկներ, ֆոտոխցիկներ և այլն:

Բողոքներ քննող անձն՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագիրը, արձանագրում է հետևյալը.

- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի գնման առարկա են հանդիսանում տեխնիկական միջոցները:

- Ընթացակարգի շրջանակներում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 9,270,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ներկայացրել է «Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ» ապրանքների գծով շրջանակային համաձայնագրի շրջանակներում

կնքված ապրանքների գնման պայմանագիրը, որով Ընկերությունը ՀՀ ՊՆ-ին է մատակարարել մի շարք տեխնիկական սարքավորումներ, և որի ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 40,923,000 ՀՀ դրամ:

- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով չի սահմանվել համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները:

Հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի գնման առարկա են հանդիսանում տեխնիկական միջոցները, իսկ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության հետ 13.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/3-3» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիրը, որն ըստ էության հանդիսանում է տեխնիկական սարքավորումների գնման պայմանագիր, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված պայմանագիրը Հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեր որպես համանման (նմանատիպ), քանի որ դրա շրջանակներում Ընկերության կողմից մատակարարված ապրանքները հանդիսանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման առարկա հանդիսացող տնտեսական խմբին դասվող ապրանքներ (տեխնիկական սարքավորումներ), իսկ ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից (40,923,000 ՀՀ):

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 6-րդ մասով, Կարգի 61-րդ, 65-րդ կետերով, ինչպես նաև Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 03.07.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2.Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 22.05.2018թ. նիստի արձանագրության 1.1 կետով կայացրած՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի 2-րդ չափաբաժնի մասով որպես

մասնագիտական փորձարության չափանիշի հիմնավորող ներկայացրած Ընկերության և ՀՀ ՊՆ-ի միջև 13.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/3/3» ծածկագրով գնման պայմանագիրը նմանատիպ չգնահատելու և առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

3.Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 20.06.2018թ. նիստի արձանագրության 1.1 կետով կայացրած՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի 2-րդ չափաբաժնի մասով որպես մասնագիտական փորձարության չափանիշը հիմնավորող ներկայացրած Ընկերության և ՀՀ ՊՆ-ի միջև 13.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/3/3» ծածկագրով գնման պայմանագիրը անհամապատասխան գնահատելու և առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

4.Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 26.06.2018թ. նիստի արձանագրության 1.1 կետով կայացրած՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը նույն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ